# ՀԱՇՎԻ ՓԱԿՄԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՏՈՒՐՔԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ. Խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները, որոնք կօգնեն մեզ փակել ձեր հաշիվ(ներ)ը, արգելանքից հանել ապահովման միջոցը կամ կատարել էսքրոյի հաշվանցում: *Եթե ունեք վաճառքի թույլտվություն, նախքան այս ձևաթուղթը լրացնելը, կարդացեք Կալիֆորնիայի Հարկերի և տուրքերի վարչության (CDTFA) «Ձեր հաշվի փակումը» 74-րդ հրապարակումը:* 74-րդ հրապարակումը կարևոր տեղեկատվություն է պարունակում թույլտվության դադարեցման վերաբերյալ: Եթե հարցեր ունեք, զանգահարեք մեր սպասարկման կենտրոնին 1-800-400-7115 (CRS:711) հեռախոսահամարով:

CDTFA Use Only

CDTFA Use Only

CDTFA Use Only

## ԲԱԺԻՆ I. ՀԱՇՎԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| ԱՆՈՒՆ | | ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐ(ՆԵՐ) |
|---|---|---|
| ՆԵՐԿԱՅԻՍ ՀԱՍՑԵ (ՓՈՂՈՑԸ, ՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ) | | ՑԵՐԵԿԱՅԻՆ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐ ( ) |
| ՔԱՂԱՔ | ՆԱՀԱՆԳ | ՓՈՍՏ. ԴԱՍԻՉ |

## ԲԱԺԻՆ II. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԻԶՆԵՍԻ ՓԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ *(ցուցումները տե՛ս երկրորդ էջում)*

1. Բիզնեսը փակելու ամսաթիվը ______
2. Արդյո՞ք գնել եք որևէ բան սեփական օգտագործման համար՝ օգտագործելով ձեր վաճառքի թույլտվությունը: ԱՅՈ ☐ ՈՉ ☐
   Եթե ԱՅՈ, ո՞ւմ եք վճարել գնված իրերի հարկերը. ☐ ա) վաճառողին ☐ բ) CDTFA-ին
3. Եթե կիրառելի է, նշեք մնացած գույքը, վերավաճառման նպատակով գնված ապրանքները կամ ոչ նահանգային մատակարարներից առանց հարկերի վճարման գնված ապրանքները.
   ☐ ա) Վաճառվել են, և այդ մասին նշվել է վերջնական հայտարարագրում ☐ բ) Պահվել են ☐ գ) Ներառվել են աուդիտում
   ☐ դ) Նվիրաբերվել են ______
   ☐ ե) Վաճառվել են վերավաճառքի համար (նշել գնորդի հաշվի համարը ______ ) ☐ զ) Այլ ______
4. Ունե՞ք բջջային կապի կանխավճարային ծառայություններ վաճառելու հաշիվ: ԱՅՈ ☐ ՈՉ ☐
   ա) Նշեք ամսաթիվը, թե երբ եք դադարեցրել կանխավճարային քարտերի և(կամ) ծառայությունների վաճառքը ______
   բ) Եթե համապատասխանում եք փոքրածախ վաճառողի կարգավիճակին, նշեք, թե որ ամսաթվին կցանկանայիք, որ ձեր հաշիվը փակվի ______
5. Նշեք ձեր փոստային հասցեն և հեռախոսահամարը ______
6. Նշեք ձեր հաշվապահական հաշվառման փաստաթղթերի վայրը ______
7. Բիզնեսը վաճառվե՞լ է ԱՅՈ ☐ ՈՉ ☐
   ա) Բիզնեսի վաճառքի ամսաթիվը ______
   բ) Վաճառքի ընդհանուր գինը (ԱՄՆ դոլար) ______
   գ) **Գնորդի** անունը, հասցեն և հեռախոսահամարը ______
   դ) Սարքավորումները և տեխնիկան վաճառե՞լ եք ԱՅՈ ☐ ՈՉ ☐ «Ոչ»-ի դեպքում անցեք «ը» կետին:
   ե) Սարքավորումների և տեխնիկայի վաճառքի գինը (ԱՄՆ դոլար) ______
   զ) Սարքավորումների և տեխնիկայի վաճառքը տեղի է ունեցել վաճառված բիզնեսի գործունեության վայրո՞ւմ: ԱՅՈ ☐ ՈՉ ☐
   է) Եթե ոչ, նշեք այն ընկերության գործունեության վայրը, որտեղ տեղի է ունեցել վաճառքը ______

   *Նշում.* Եթե բիզնեսը չեք վաճառել, սակայն վաճառել եք սարքավորումները և տեխնիկան, այդ ապրանքների վաճառքի գինը պետք է ներառեք վերջնական հայտարարագրի «Հարկման ենթակա գնումներ» բաժնում:

   ը) Էսքրոյի համարը ______
   թ) Էսքրոյի ընկերության անվանումը, հասցեն և հեռախոսահամարը ______

## ԲԱԺԻՆ III. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

| ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ | ԱՆՈՒՆԸ ԵՎ ԿՈՉՈՒՄԸ ՏՊԱՏԱՌԵՐՈՎ | ԱՄՍԱԹԻՎ |
|---|---|---|
| | | |

Մաքրել Տպել

## ԲԱԺԻՆ IV. ՀԱՇՎԻ ՓԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Ստորև պահանջվող տեղեկությունները կարող են անհրաժեշտ լինել ձեր հաշիվ(ներ)ը փակելու, տրամադրված ապահովման միջոցներն արգելանքից հանելու կամ էսքրոյի հաշվանցում կատարելու համար:

- Բոլոր այլ չմարած պարտավորությունների վճարումների անդորրագրերը
- Ձեր վերջնական հարկային հայտարարագիրը և վճարումը (եթե հայտարարագիրը չունեք, զանգահարեք՝ 1-800-400-7115 [CRS:711]): Ձեր գործարքի վեջնականացումը արագացնելու նպատակով բոլոր գումարները պետք է վճարել հավաստագրված ֆոնդերում: Եթե պահանջվում է վճարումները կատարել էլեկտրոնային փոխանցմամբ, ապա ձեր վերջնական վճարումը նույնպես պետք է կատարեք էլեկտրոնային փոխանցման եղանակով:
- Ձեր էսքրո վճարման հանձնարարագրերի պատճենները կամ առուվաճառքը հաստատող փաստաթղթի պատճեն, որում նշված է վաճառված գույքի, սարքավորումների ու տեխնիկայի արժեքը:

**Լրացված այս ձևաթուղթը և ուղեկցող փաստաթղթերն ուղարկեք հետևյալ հասցեով՝**

**California Department of Tax and Fee Administration**
**Customer Service Center**
**PO Box 942879**
**Sacramento, CA 94279-0090**

## ԲԱԺԻՆ V. ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

**Եթե ստորև թվարկվածները չեն առնչվում ձեր հաշվի փակմանը, և եթե լրացրել եք բաժիններ I-ը և II-ը և ստորագրել եք բաժին III-ում, ուղարկեք այս փաստաթուղթը CDTFA-ի համապատասխան գրասենյակին: CDTFA-ի գրասենյակների հասցեների ցանկը տե՛ս 74-րդ հրապարակման մեջ:**

**Փոքրածախ վաճառողներ**. «փոքրածախ վաճառողը» բջջային կապի ծառայություններ վաճառողն է (ոչ հեռահաղորդակցության ծառայության մատակարարը), որի կատարած բջջային կապի կանխավճարային ծառայությունների վաճառքը չի գերազանցում նախորդ օրացուցային տարվա վաճառքի առավելագույն շեմը: Սկսած 2017 թվականի հունվարի 1-ից՝ փոքրածախ վաճառողներն այլևս պարտավոր չեն իրենց հաճախորդներից գանձել և հավաքել բջջային կապի կանխավճարային ծառայությունների հավելավճարը: Մեկից ավելի վաճառքի կետ ունեցող վաճառողների տարեկան վաճառքը որոշելու համար պետք է հաշվի առնել բոլոր վաճառքի կետերի անլար կապի կանխավճարային ծառայությունների և ապրանքների վաճառքի ծավալը: Փոքրածախ վաճառողները պատասխանատու են հաշվապահական գրանցումները պահպանելու համար, որպեսզի ցույց տան, որ նրանց տարեկան վաճառքի ծավալը չի գերազանցում տարեկան առավելագույն շեմը:

**Հաշվապահական հաշվառման փաստաթղթերի վայրը**. ձեր հաշվապահական հաշվառման փաստաթղթերի վայրը կարևոր է աուդիտի համար: Աուդիտները կարևոր են, քանի որ դրանք պաշտպանում են նահանգին հարկային ապառքից, իսկ հարկատուին՝ գերավճար կատարելուց:

**Էսքրոյի վճարման հանձնարարագրերի կամ առուվաճառքը հաստատող փաստաթղթի պատճեններ**. այս փաստաթղթերը ցույց են տալիս վաճառված գույքի, սարքավորումների և տեխնիկայի արժեքը: Եթե սարքավորումների և տեխնիկայի վաճառքը չդիտարկվի հաշվի փակման օրը, ապա տեխնիկայի հաջորդիվ առանձին վաճառքը կարող է համարվել միանգամյա վաճառք: Սարքավորումների և տեխնիկայի միանգամյա վաճառքը, որը տեղի կունենա հաշվի փակման օրվանից հետո, ենթակա է հարկման, եթե.

1. Վաճառքը տեղի է ունենում հաշվի փակման օրվանից հետո 60 օրվա ընթացքում, և հարկատուն չի կարողանում հիմնավորել, որ վաճառքը հաշվի փակման պահին պլանավորված չի եղել, կամ
2. Վաճառքը տեղի է ունենում հաշվի փակման օրվան հաջորդող 60 օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, և

   ա) հաշվի փակման օրը վաճառքի պայմանագիրն առկա է եղել,

   բ) առկա է վարձակալության պայմանագիր գնման հնարավորությամբ, կամ

   գ) պատշաճ կերպով իրականացվել են սարքավորումների և տեխնիկայի վաճառքի պլանավորման աշխատանքներ:

**Նշվածները չներկայացնելու դեպքում, նախքան որպես երաշխիք տրամադրված ապահովման միջոցն արգելանքից հանելը և(կամ) ձեր հաշիվը փակելը, CDTFA-ն պետք է սպասի 30 օր: Եթե անհրաժեշտ է օգնություն վերը նշվածներից ցանկացածը ներկայացնելու հարցում, դիմեք CDTFA-ի մոտակա գրասենյակ՝ մանրամասն ցուցումներ ստանալու համար:**

| ԼՐԱՑՎՈՒՄ Է ՄԻԱՅՆ CDTFA-Ի ԿՈՂՄԻՑ | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Գրանցման տեղեկությունները թա՞րմ են | ԱՅՈ ☐ | ՈՉ ☐ | Սարքավորումներ և տեխնիկա՞ | ԱՅՈ ☐ | ՈՉ ☐ |
| Ներկայացվե՞լ է վերջնական հայտարարագիր | ԱՅՈ ☐ | ՈՉ ☐ | Գո՞ւյք | ԱՅՈ ☐ | ՈՉ ☐ |
| Հարկատուն ստացե՞լ է վերջնական հայտարարագիր | ԱՅՈ ☐ | ՈՉ ☐ | Փաստաթղթերը կցվա՞ծ են | ԱՅՈ ☐ | ՈՉ ☐ |
| Կա՞ն օրենքի խախտումներ | ԱՅՈ ☐ | ՈՉ ☐ | Չկիրառված վճարո՞ւմ | ԱՅՈ ☐ | ՈՉ ☐ |